

“Հայկական ատոմային էլեկտրակայան” ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարագիրը կադրային քաղաքականության վերաբերյալ

Արդյունավետ կադրային քաղաքականությունը և անձնակազմի կառավարումը հանդիսանում են միջուկային էներգաբլոկի անվտանգ, հուսալի և խնայողական շահագործումն ապահովող կարևոր գործոններ:

“ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը հայտարարում է, որ ձեռնարկության անձնակազմը հանդիսանում է բարձրագույն արժեք, իսկ յուրաքանչյուր աշխատող՝ միասնական, համերաշխ և պրոֆեսիոնալ թիմի մաս:

Ելնելով իր առջև դրված նպատակներից և խնդիրներից և գործունեության յուրահատկությունից՝ “ՀԱԷԿ” ՓԲԸ անձնակազմի կոմպետենտության բարձր մակարդակի ապահովման և պահպանման հարցերը դիտվում են որպես բարձր առաջնահերթության հարցեր:

“ՀԱԷԿ” ՓԲԸ կադրային քաղաքականության հիմնական բաղադրիչներն են.

- անձնակազմի կառավարման աշխատանքների պլանավորում՝ ելնելով “ՀԱԷԿ” ՓԲԸ առաջ դրված ստրատեգիական խնդիրներից,
- անձնակազմի ընտրություն՝ ըստ մասնագիտության, և համալրում պահանջումների վերլուծության հիման վրա,
- անձնակազմի որակյալ ուսուցում և մշտական զարգացում՝ ի հաշիվ անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման և համապատասխան միջոցների հատկացման,
- ուսուցման, որակավորման բարձրացման և պահպանման համակարգի որակի և արդյունավետության մշտական կատարելագործում՝ ուսուցման նկատմամբ համակարգային մոտեցման կիրառման և համակողմանի գնահատման միջոցով,
- ազնվության և փոխադարձ հարգանքի մթնոլորտի ստեղծում, որը նպաստում է անձնակազմի ստեղծագործական հնարավորությունների և պոտենցիալի լիակատար իրագործմանը,
- աշխատողի կարիերային և մասնագիտական աճի ապահովում՝ հաշվի առնելով “ՀԱԷԿ” ՓԲԸ պահանջումները, մասնագիտական որակները և անվտանգության հարցերի նկատմամբ վերաբերմունքը,
- խրատատվության պրակտիկայի կատարելագործում, ինչպես նաև փորձի ու գիտելիքների փոխանցում երիտասարդ սերնդին,
- աշխատողների աշխատանքի վարձատրման տարբերակված համակարգի ապահովում՝ կախված անձնական աշխատանքային ներդրումից՝ դրված խնդիրներին և նպատակներին հասնելու գործում,
- բարձր որակավորում ունեցող և բավարար կոմպետենտ մասնագետների նշանակում “ՀԱԷԿ” ՓԲԸ թափուր ղեկավար պաշտոնների,
- պրոֆեսիոնալիզմ, բարձր կարգապահություն և “ՀԱԷԿ” ՓԲԸ անվտանգ ու արդյունավետ աշխատանքի ապահովման պատասխանատվություն ցուցաբերող աշխատողներին քաջալերելու և շահագրգռելու պրակտիկայի ներդրում,
- աջակցություն՝ կապալառու կազմակերպություններին անձնակազմի ուսուցման և որակավորման պահպանման հարցերում,
- առողջության և աշխատունակության պահպանմանը, լիարժեք հանգստի և մասնագիտական վերականգնման ապահովմանը, ինչպես նաև աշխատանքի

վետերանների աջակցությանն ուղղված սոցիալական զարգացման ծրագրերի պլանավորում ու իրականացում:

“ՀԱԷԿ” ՓԲԸ ղեկավարությունը կատարում է մշտական և նպատակաուղղված աշխատանք՝ ուղղված մասնագիտական խնդիրների և սոցիալական պրոբլեմների լուծմանը, որոնք վերաբերում են կադրային քաղաքականության բոլոր ուղղություններին:

Մենք հաստատում ենք, որ հայտարարված սկզբունքների կատարումը կիրականացվի կոլեկտիվում անվտանգության կուլտուրայի բարձրացման և սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ամրապնդման պայմաններում: Աշխատողների բարձր որակավորման և թիմային համերաշխության պահպանումը մշտապես գտնվում է մեր ուշադրության կենտրոնում: